ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+374 10) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

Ք. Երևան 19.02.2024թ.

Որոշում
<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն ՓԲԸ տնօրենի ժ/պ
Թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ- 24/28/1

Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 04.01.2024 թվականին <<Նորք-Մարաշ> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին տարբեր չափաբաժիններով մասնակցել է նաև <<Մեգիէլ>> ՍՊԸ–ն (Այսուհետև՝ Ընկերություն):

Հայտերի բացման և գնահատման նիստին գնահատող հանձնաժողովի թիվ 4 որոշմամբ Ընկերության հայտում, արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես.

- <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն հավելված 1,1-ով

4-րդ չափաբաժնի համար առաջարկել է <<Sorin>> ապրանքային նշանի ԱԱՇ միջամտության հավաքածու և ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա է <<կիրառելի SORIN XTRA կամ HAEMONETICS Cell Saver Elite սարքավորման հետ>> բառակապակցությունը: Հայտնի է, որ <<Sorin>> ապրանքային նշանի ԱԱՇ միջամտության հավաքածուն կիրառելի չէ HAEMONETICS Cell Saver Elite սարքավորման հետ, ուստի << կամ HAEMONETICS Cell Saver Elite>> բառակապակցությունը անհրաժեշտ է հանել տեխնիկական բնութագրերից կամ ներկայացնել այլ հավաստի տեղեկություններ;

10-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես. Չեն համապատասխանում մաքսիմալ արյան հոսքի ցուցանիշը, արտերիալ ֆիլտրի ցուցանիշը, կարդիոտոմիկ ֆիլտրացիայի ցուցանիշը, երակային հատվածում ֆիլտրացիայի ցուցանիշը, բացակայում է որևէ նշում հրավերով նախատեսված <<Նախատեսված է մինչև 180կգ քաշով պացիենտի համար>>; << Վաճառողը պարտավոր է սեփական միջոցների հաշվին իրականացնել հետևյալ գործառույթները.

-յուրաքանչյուր խոտանված ապրանքի դեպքում Պատվիրատուից տրամադրված տեղեկությունը փոխանցել Արտադրողին, ստանալ այդ դեպքի համար արտադրողի բացատրությունը և ներկայացնել Գնորդին: Ընդ որում Գնորդը իրավունք ունի ստուգել ներկայացված տեղեկության իսկությունը հենց արտադրողի հետ:

-արտադրական խոտանի դեպքում ապրանքը փոխարինել նորով,

-արտադրողի կողմից ապրանքի որևէ խմբաքանակի(Գնորդին մատակարարած) հետ կանչի դեպքում այդ տեղեկությունը Գնորդին փոխանցել և հետ կանչված ապրանքները փոխարինել նորով,

-ապրանքի փոխարինումը պետք է իրականացվի երկու ամսվա ընթացքում:>> պահանջների մասով:

Բացի այդ Մասնակիցը նշել է 219մլ տարողունակության ծավալ(Priming volume), սակայն այդ ցուցանիշը չի համապատասխանում արտադրողի պաշտոնական կայքում առկա ցուցանիշների հետ, որտեղ նշված է 351մլ (https://www.livanova.com/cardiopulmonary/getmedia/05e60b51-0de6-4c0a-bd48-f99c3ab0f439/im-7300170-cp-b-inspire-

family-brochures-6-8-final-v01.pdf), ուստի այս մասով անհրաժեշտ է պարզաբանել ներկայացված ցուցանիշը, կամ տրամադրել արտադրողի կողմից տրված որևէ փաստաթուղթ կամ հղում կայք էջին, որով կհիմնավորվի ներկայացված 219մլ ցուցանիշը:

11-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես. չեն համապատասխանում մաքսիմալ արյան հոսքի ցուցանիշը, գազափոխանակման մեմբրանի մակերեսի ցուցանիշը; բացակայում է ջերմափոխանակիչի մակերեսի ցուցանիշը, նշում հրավերով նախատեսված ջերմափոխանակիչի նյութի մասին, նշում << Նախատեսված է մինչև 180կգ քաշով պացիենտի համար>>; <<Վաճառողը պարտավոր է սեփական միջոցների հաշվին իրականացնել հետևյալ գործառույթները.

-յուրաքանչյուր խոտանված ապրանքի դեպքում Պատվիրատուից տրամադրված տեղեկությունը փոխանցել Արտադրողին, ստանալ այդ դեպքի համար արտադրողի բացատրությունը և ներկայացնել Գնորդին: Ընդ որում Գնորդը իրավունք ունի ստուգել ներկայացված տեղեկության իսկությունը հենց արտադրողի հետ:

-արտադրական խոտանի դեպքում ապրանքը փոխարինել նորով,

-արտադրողի կողմից ապրանքի որևէ խմբաքանակի(Գնորդին մատակարարած) հետ կանչի դեպքում այդ տեղեկությունը Գնորդին փոխանցել և հետ կանչված ապրանքները փոխարինել նորով,

-ապրանքի փոխարինումը պետք է իրականացվի երկու ամսվա ընթացքում:>> պահանջների մասով:

Բացի այդ Մասնակիցը նշել է 219մլ տարողունակության ծավալ(Priming volume), սակայն այդ ցուցանիշը չի համապատասխանում արտադրողի պաշտոնական կայքում առկա ցուցանիշների հետ, որտեղ նշված է 351մլ (https://www.livanova.com/cardiopulmonary/getmedia/05e60b51-0de6-4c0a-bd48-f99c3ab0f439/im-7300170-cp-b-inspire-family-brochures-6-8-final-v01.pdf), ուստի այս մասով անհրաժեշտ է պարզաբանել ներկայացված ցուցանիշը, կամ տրամադրել արտադրողի կողմից տրված որևէ փաստաթուղթ կամ հղում կայք էջին, որով կհիմնավորվի ներկայացված 219մլ ցուցանիշը:

Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է շտկում իրականացնելու համար, տարամադրվելով Օրենսդրությամբ նախատեսված 1 աշխատանքային օր ժամկետը:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացվել փաստաթուղթ, որի գնահատման արդյունքում հանձնաժողովը արձանագրել է հետևյալը.

<<-Մասնակիցը շտկված փաստաթուղթ՝ հավելված 1,1-ի տեսքով, ներկայացրել է միայն 4-րդ չափաբաժնի մասով, որը հանձնաժողովը գնահատում է բավարար:

-10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ընկերությունը արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել: Ընկերությունը ներկայացրել է գրություն, որով տարողունակության ծավալի ցուցանիշի մասով ընդունել է տեխնիկական վրիպակը և նշել, որ իր առաջարկած ապրանքների համար այդ ցուցանիշը հանդիսանում է 315մլ: Հանձնաժողովն արձանագրում է, որ այս ցուցանիշը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին:

-Ընկերությունը գրությամբ հայտնել է նաև, որ Վաճառողի կողմից մատակարարված ապրանքների խոտանի դեպքում ստանձնվող պարտավորությունները չեն հանդիսանում ապրանքի տեխնիկական բնութագրեր և դրանք տեխնիկական բնութագրերում պատվիրատուն ներառելու իրավասություն չունի: Ընկերությունը այդ մասով հղում է կատարել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին և շտկում չի կատարել:>>

Հանձնաժողովը նիստով արձանագրել է նաև այն, որ հենց Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների համաձայն գնման առարկայի բնութագրեր են հանդիսանում նաև ձեռքբերման պայմանները, որակին, ինչպես նաև անվտանգությանն ուղղված նկարագրությունները: Այսինքն, միայն ապրանքի ֆիզիկական չափերն ու հատկանիշները չեն, որ հանդիսանում են բնութագրեր:

Հաշվի առնելով վերոգրյալները, հանձնաժողովը 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով <<Մեգիէլ>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար՝ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված լինելու պատճառով, և մերժել:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից 10-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել <<Բոնանզա>> ՍՊԸ-ն, իսկ 11-րդ չափաբաժնով՝ <<Մեդ Քեփիթլ>> ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում պայմանագրեր կնքելու որոշումը հրապարակվել է տեղեկագրում 19.01.2024 թվականին:

10-րդ չափաբաժնով <<Բոնանզա>> ՍՊԸ հետ սահմանված կարգով կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28-9 գնման պայմանագիրը 07.02.2024 թվականին:

11-րդ չափաբաժնով <<Մեդ Քեփիթլ>> ՍՊԸ հետ սահմանված կարգով կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28-10 գնման պայմանագիրը 07.02.2024 թվականին:

Ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակվել է 08.02.2024 թվականին:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8,14 կետով սահմանված է հետևյալը.

<<8.14 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը(ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդով քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավաչտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (այդ թվում շտկման ենթակա) կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (այսուհետ նաև տուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում: >>

Ընդունել ի գիտություն, որ Ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ առկա չէ և սույն որոշման կայացման պահին Ընկերության կողմից հայտի ապահովում չի վճարվել Պատվիրատուին:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակցի հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<Մեգիէլ>> ՍՊԸ	01541006	ք. Երևան, Տիչինայի 150/20	Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին	-	-	19.02.2024թ: ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28

			տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը **10 և 11-րդ չափաբաժինների մասով**			

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

<<Մեգիէլ>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ